ԸՆԿԵՐ Ն. Ս. ԽՐՈՒՇՉՈՎԻ ՃԱՌԸ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 40-ԱՄՅԱԿԻՆ, 1961 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-ԻՆ

Թանկագին ընկերնե՛ր, բարեկամնե՛ր։ Այսօր Հայաստանի ժողովուրդը և նրա հետ միասին Սովետական Միության եղբայրական ժողովուրդները նշում են Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման քառասնամյակը։

Հայաստանի բազմադարյան պատմության մեջ քառասուն տարին շատ փոքր ժամանակամիջոց է, բայց հենց այդ տարիները նշանավորում են հայ ժողովրդի նոր կյանքի սկիզբը։ Սոցիալիզմի կենարար ուժը հայ ժողովրդին բերեց մեծ վերածնունդ, նրա գիտության ու կուլտուրայի, բարեկեցության վերելք, նրա տաղանդների ու ձիրքերի ծաղկում։ Սովետական Հայաստանը արժանավոր տեղ է գրավում մեր Հայրենիքի ռեսպուբլիկաների համաստեղության մեջ։ (Բուռն ծափահարություններ)։ *Աշխատասեր ու տաղանդավոր հայ ժողովուրդը նշանակալի ավանդ է մուծում կոմունիստական շինարարության մեծ գործում։* (Երկարատև ծափահարություններ)։

Թեև օրացուցային կարգով դուք ձեր հոբելյանը նշում եք որոշ ուշացումով, բայց ես կարծում եմ, որ գարունը, բնության մայիսյան ծաղկումը ավելի մեծ չափով են նպաստում ձեր մեծ տոնի անցկացմանը։ (Բուռն ծափահարություններ)։

Թույլ տվեք Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի անունից ու հանձնարարությամբ ձեզ, իսկ հանձին ձեր՝ Հայաստանի բոլոր աշխատավորներին՝ բանվորներին, կոլտնտեսականներին, ինտելիգենցիային, պարտիական և անպարտիական ընկերներին ջերմորեն շնորհավորել մեծ տոնի՝ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման քառասնամյակի առթիվ։ (Բուռն ծափահարություններ)։

Ձեր ժողովրդի կյանքի այդ կարևոր իրադարձությունը նշվում է նշանակալի օրերին։ Ամբողջ երկրում տեղի է ունենում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարի գործարար նախապատրաստությունը։

Մենք զարմանալի ժամանակ ենք ապրում։ Բառացիորեն ամեն օր սոցիալիզմը ցուցադրում է իր աչքի ընկնող հաղթանակները։ Հենց վերջերս հուժկու աբ-

ձագանքով ամբողջ երկրագնդով մեկ տարածվեց Երկրի շուրջը տիեզերանավով մարդու հաղթական թռիչքի լուրը։ Այո, հենց Երկրի շուրջը, և ոչ թե մի կերպ։ (Ուրախ աշխուժություն դահլիճում. ծափահարություններ)։ Տիեզերք թափանցած առաջին մարդը եղավ Սովետական Միության քաղաքացի, կոմունիստ Յուրի Ալեքսեևիչ Գագարինը, որի անունը այժմ հայտնի է ամբողջ աշխարհին։ (Բուռն ծափահարություններ)։

Առաջադեմ մարդկությունը ուրախանում ու հպարտանում է սովետական գիտության ու տեխնիկայի այդ նշանակալի հաղթանակով։ Մեր երկիրը մեկ անգամ ևս հաստատեց, թե որքան անսահման են մարդու ուժերը, որը բնությունից մեկը մյուսի ետևից խլում է նրա գաղտնիքները և դրանք ծառայեցնում իրեն։ Ճիշտ է, որոշ պետություններում գտնվեցին այնպիսի, մեղմ ասած, օրիգինալներ, որոնք յուրովի մեկնաբանեցին Յուրի Ալեքսեևիչ Գագարինի թռիչքը։ Առանց երկար մտածելու, ոմանք հայտարարեցին, թե մեր տիեզերագնաց Գագարինը իշխան Գագարինների համարյա ուղղակի հետնորդն է։ (Ծիծաղ դահլիճում)։

Ահա թե ինչ ժամանակներ են սկսվել։ Քանի՞ տասնամյակ բուրժուական արիստոկրատիան արհամարհանքով ասում էր, թե բանվոր մարդիկ, աշխատանքի մարդիկ չեն կարող յուրացնել գիտության, տեխնիկայի, կուլտուրայի բարձունքները, չեն կարող պետություն ու հասարակություն ղեկավարել։ Իսկ այժմ իրենց պարզիտային սովորության համաձայն, պարոնայք «նախկինները» դեմ չեն կպչելու բանվոր մարդու փառքին։ (Ծիծաղ դահլիճում։ Ծափահարություններ)։ Նրանք մինչև օրս չեն կարողանում հաշտվել այն բանի հետ, որ մեր երկրի բանվոր դասակարգը, գյուղացիությունը, աշխատավոր ինտելիգենցիան հանդես են գալիս որպես տաղանդավոր ստեղծարար մարդիկ, հզոր ու ծաղկող սոցիալիստական պետության անխոնջ աշխատավորներ։ Սովետական մարդիկ հաջողությամբ շարունակում են կոմունիզմի կառուցումը և դրա համար չեն հարցնում իշխանների, կոմսերի ու բարոնների ոչ թույլտվությունը, ոչ էլ նրանց խորհուրդը։ (Երկարատև ծափահարություններ)։

Այն պահից, երբ «Ավրորա» հածանավի կրակոցը աշխարհին ազդարարեց մարդկության պատմության նոր դարաշրջանը, մեր պետությունը և սովետական ժողովուրդը պատմական շատ հաղթանակներ են տարել, ցուցադրելով սոցիալիստական նոր հասարակարգի առավելությունները կապիտալիստականի հանդեպ։

Մեր երկրի ժողովուրդների անօրինակ սխրագործությունները, որոնք կատարվել են լենինյան Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, հիացմունք են առաջացնում ամբողջ աշխարհում, սարսափեցնում են սոցիալիզմի թշնամիներին։ Մեծ Հոկտեմբերի ազնիվ գաղափարները, մեր ժողովրդի հսկայական նվաճումները ոգեշնչման աղբյուր են կապիտալիստական երկրների աշխատավորների համար այն պայքարում, որ նրանք մղում են հանուն ազատության և անկախության, խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի։ Այժմ արդեն սոցիալիզմի ուղին է թևակոխել ավելի քան մեկ միլիարդ մարդ կամ ամբողջ մարդկության ավելի քան մեկ երրորդը։

Տարեցտարի ավելի ու ավելի հարստանում, ուժերով է լցվում մեր երկիրը, ծաղկում են նրա էկոնոմիկան և կուլտուրան։ Սովետական ժողովուրդը հաստատակամորեն ու հետևողականորեն իրագործում է կոմունիստական շինարարության՝ ՍՄԿՊ XXI համագումարի նախատեսած ծրագիրը։

Կոմունիստական Հասարակարգի ծավալուն կառուցման ուղիով մեր աոաջընթացի արդյունքներն ու հեռանկարները հիրավի հոյակապ են։ Դրանք առաջացնում են սովետական մարդկանց օրինական հպարտությունը, մեր բոլոր բարեկամների հիացմունքը։

Ընկերնե՛ր։ Մեր երկրի բոլոր հսկայական հաջողությունների մեջ, լենինյան գաղափարների, Մեծ Հոկտեմբերի գաղափարների հաղթանակի համար մղված պայքարում աշխատանքի քիչ բաժին չունի ձեր ռեսպուբլիկայի ժողովուրդը։ Հայ ժողովուրդը դարերով բարեկամության սերտ, անխզելի կապերով է կապված ռուս մեծ ժողովրդի և մեր երկրի մյուս ժողովուրդների հետ։ (Երկարատև ծափահարություններ)։ Այդ բարեկամությունը, որն ստեղծվել է օտարերկրյա զավթիչների, ցարական ինքնակալության, կալվածատերերի ու կապիտալիստների ճնշման դեմ երկարամյա պայքարում, հատկապես ամրապնդվեց Սովետական իշխանության համար մղված պայքարում, սոցիալիստական շինարարության տարիներին։

Հայաստանի աշխատավորները լուսավոր, ազատ կյանքի են հասել ռևոլյուցիոն պայքարի դժվարին և փշոտ ճանապարհով, Լենինի դրոշով, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները բոլոր հիմքերն ունեն հպարտանալու իրենց ռևոլյուցիոն տրադիցիաներով, իրենց մարտական անցյալով։

Դեռևս Ռուսաստանում բանվորական շարժման արշալույսին Հայաստանի աշխատավորները ստեղծեցին իրենց մարքսիստական կազմակերպությունները։ Մեր պարտիայի ստեղծման պահից Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները պարտիայի հավատարիմ ռևոլյուցիոն ջոկատներն էին։ Վ. Ի. Լենինը Անդրկովկասը դասում էր այն կենտրոնների թվին, որտեղ պայքարի մասսայական բնույթը առավել ուժգին և վառ կերպով էր արտահայտված։

Ինքնակալության և կապիտալիզմի դեմ մղված պայքարի տարիներին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններն ընթանում էին ամբողջ Անդրկովկասի բոլշևիկների հետ ձեռք-ձեռքի տված, նրանց հետ գործում էին միասնական կազմակերպության մեջ։ Կովկասյան ժողովուրդների լավագույն ներկայացուցիչները համատեղ պայքարում էին աշխատավորների երջանկության համար, միատեսակ կերպով անհաշտ էին ցարական սատրապների, կապիտալիստների ու կալվածատերերի նկատմամբ, բուրժուական նացիոնալիստների հայկական դաշնակների, վրացական մենշևիկների, ադրբեջանական մուսավաթականների նկատմամբ։ Ընդհանուր թշնամիների դեմ պայքարում ստեղծված ինտերնացիոնալ տրադիցիաները Անդրկովկասի աշխատավորների ռևոլյուցիոն շարժման հրաշալի գիծն են կազմում։

Մեծ Հոկտեմբերը ազատություն բերեց ցարական Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդներին։ Անդրկովկասի աշխատավորները, ոգեշնչված Կենտրոնական Ռուսաստանում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակով, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ հերոսական պայքար ծավալեցին Սովետական իշխանության հաստատման համար։ Միայն բուրժուանացիոնալիստական պարտիաների դավաճանական, հակաժողովրդական քաղաքականության, ինչպես նաև նրանց կողմից օգնության կանչված օտարերկրյա իմպերիալիստների միջամտության հետևանքով Սովետական իշխանությունը այստեղ ավելի ուշ հաղթանակեց։ Հայ ժողովրդին վիճակվեց կրելու դաշ-

նակների և նրանց արտասահմանյան տերերի ճնշումն ու ծաղրուծանակը։ Հայաստանը այդ տարիներին վշտի և արցունքի, աղքատության և վայրագ կամայականության երկիր էր։ Բայց Հայաստանի աշխատավորները չհաշտվեցին դաշնակների և ինտերվենտների տեր ու տնօրինության հետ, ցած չդրեցին զենքը և պայքարեցին այնքան ժամանակ, մինչև որ Սովետական իշխանությունը հաղթանակեց։ Նրանց ռևոլյուցիոն պայքարը գլխավորում էին ժողովրդի հավատարիմ զավակները, կայուն լենինյանները։ (Երկարատև ծափահարություններ)։

Հայ ժողովուրդը կարող է հպարտանալ, որ Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծմանը մասնակցել են հայ կոմունիստներ։ Բանվորներն ու գյուղացիները Հայաստանի ռևոլյուցիոն շարժման պատմության մեջ հերոսական էջ գրեցին 1920 թվականի մայիսին, ապստամբություն բարձրացնելով դաշնակների դեմ։ Ապստամբության կազմակերպիչն ու ղեկավարը Հայաստանի բոլշևիկներն էին։ Օտարերկրյա իմպերիալիստների հետ համագործող դաշնակցական հակառևոլյուցիային հաջողվեց ժամանակավոր հաղթանակ տանել, ապստամբությունը խեղդել արյան մեջ։ Արյունալի տեռորի այն ծանր օրերին դահիճների ձեռքով զոհվեցին ժողովրդի լավագույն զավակները՝ Ս. Ալավերդյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Ղ. Ղուկասյանը, Հ. Սարուխանյանը, Վ. Ալեքսևը, Մ. Մաշուրյանը, Կ. Մկրտչյանը, Պ. Մատիչկոն, Բ. Բատիկյանը և ուրիշներ։ Նրանց հիշատակը հավե՞ռժ կապրի աշխատավորների սրտերում։

Բայց պարտությունը չընկճեց հայ ժողովրդի ոգին։ Նա հաստատ հավատում էր բանվոր դասակարգի ու նրա կոմունիստական ավանգարդի ուժերին, Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնությանը, որը հաջողությամբ ջախջախում էր ներքին և արտաքին հակառևոլյուցիան։ Սովետական իշխանության համար մղվող պայքարում կարևոր նշանակություն ունեցավ տեղական բոլշևիկյան կազմակերպությունների միավորումը Հայաստանի Կոմունիստական պարտիայի մեջ որպես ՌԿ(բ)Պ բաղկացուցիչ մասը։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները 1920 թվականին վերստին ապստամբեցին, տապալեցին դաշնակների ատելի տիրապետությունը։ Կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը, Սովետական կառավարության ցուցումով, Հայաստանի ապստամբած բանվորներին ու գյուղացիներին օգնության եկան 11-րդ բանակի կարմիրբանակային զորամասերը։

Վլադիմիր Իլյիչ Լենինը ուրախությամբ դիմավորեց նոր Սովետական Հայաստանի ծննդյան լուրը։ Հայաստանի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահ Ս. Կասյանի անունով ուղարկած հեռագրում Վ. Ի. Լենինը գրել էր. «Հանձին Ձեր՝ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»։ (Ծափահարություններ)։

Մեր մեծ առաջնորդ և ուսուցիչ Վլադիմիր Իլյիչ Լենինը կանգնած էր Սովետական Սոցիալիստական Հայաստանի օրորոցի մոտ։

Ռեսպուբլիկայի բանվորները, կոլտնտեսականներն ու աշխատավոր ինտելիգենցիան միշտ խորին շնորհակալության զգացումով կարտասանեն բոցաշունչ բոլշևիկ լենինյանների՝ Ի. Վ. Ստալինի (ծափահարություններ), Մ. Ի. Կալինինի (ծափահարություններ), Ս. Գ. Շահումյանի (ծափահարություններ), Պ. Ա. Ջափարիձեի (ծափահարություններ), Ա. Ի. Միկոյանի (ծափահարություններ), Ս. Ս. Սպանդարյանի (ծափահարություններ), Գ. Կ. Օրջոնիկիձեի (ծափահարություններ), Ս. Մ. Կիրովի (ծափահարություններ), Մ. Գ. Ցխակայայի (ծափահարություններ), Մ. Ազիզբեկովի (ծափահարություններ), Ի. Տ.

Ֆիոլետովի (ծափահարություններ), Ալ. Մյասնիկյանի (ծափահարություններ), Բ. Մ. Կնունյանցի (ծափահարություններ) և ուրիշների անունները, որոնք գլխավորում էին Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը, բարձր պահած տանում էին մարքսիզմ-լենինիզմի, Հոկտեմբերի գաղափարների դրոշը։

Սովետական իշխանության հաղթանակը հայ ժողովրդին փրկեց ֆիզիկական ոչնչացումից, ապահովեց նրա ազգային անկախությունը, բացեց երջանկության, տնտեսական և կուլտուրական ծաղկման ճանապարհը։

Կովկասի բոլոր ժողովուրդների տնտեսական վերածննդի համար անգնահատելի նշանակություն ունեցավ 1921 թվականի սկզբներին Վ. Ի. Լենինի գրած նամակը Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստներին. նամակում նշված էին քայքայումը վերացնելու և ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղիները։ Նամակում առանձնապես ընդգծված էր էլեկտրիֆիկացման և ոռոգման անհրաժեշտությունը։

Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդին եղբայրական անշահախնդիր օգնություն ցույց տվեց նյութական միջոցներով։ Իրագործելով մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը, Սովետական Միության Կոմունիստական պարտիան իր առաջնահերթ խնդիրն էր համարում ապահովել բոլոր միութենական ռեսպուբլիկաների, այդ թվում նաև ցարական Ռուսաստանի նախկին հետամնաց ծայրամասերի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի արագ աճը։ Պատմական չափազանց կարճ ժամկետներում այդ ռեսպուբլիկաներում ստեղծվեց հզոր սոցիալիստական էկոնոմիկա, որը հենվում է բարձր զարգացած ինդուստրիայի և կոլեկտիվ, մեքենայացված գյուղատնտեսության վրա։

Լենինյան ցուցումը համատարած էլեկտրիֆիկացման անհրաժեշտության վերաբերյալ, առանց որի անհնարելի է սոցիալիզմի և կոմունիզմի նյութատեխնիկական հիմքի ստեղծումը, հանդիսացավ Հայաստանի կոմունիստների գործունեության մարտական ծրագիրը։ Այսօր մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ այդ ծրագիրը հաջողությամբ կենսագործվում է։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում կառուցվել են ավելի քան 30 խոշոր ու միջին էլեկտրակայաններ։ Հայաստանում այժմ տարեկան արտադրվում է ավելի քան 2,7 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա։ Դա 1,4 անգամ շատ է, քան 1913 թվականին ամբողջ ցարական Ռուսաստանում արտադրված էլեկտրաէներգիան։ Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Սովետական Հայաստանը ետ է թողել կապիտալիստական այնպիսի զարգացած երկրների, ինչպիսիք են Ճապոնիան և Իտալիան։ Ռեսպուբլիկայում բնակչության մեկ շնչին 15 անգամ շատ էլեկտրաէներգիա է արտադրվում, քան Թուրքիայում, 41 անգամ շատ, քան Իրանում։ (Ծափահարություններ)։

Հայ ընկերները, ռեսպուբլիկայի ղեկավարները, երբ ես եկա այստեղ, զրույցներից մեկում ինձ ասում էին, որ եթե մենք երևկոյան ուղղաթիռով բարձրանանք և թռչենք Հայաստանի սահմանագծի վրա, ապա ուղղաթիռը ինչպես էլ պտտելու լինի, կարելի է իսկույն որոշել մեր պետական սահմանը։ Մենք կտեսնեինք որտեղ է Հայաստանը, իսկ որտեղ են հարևան արտասահմանյան երկրները։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, որ Սովետական Հայաստանի տերիտորիայում ամեն ինչ լուսավորված է էլեկտրականությամբ, իսկ սահմանից այն կողմ, ինչ-

պես ասվում է, գարհուրելի խավար է։ (Բացականչություններ՝ «Ճիշտ է», բուռն ծափահարություններ)։ Այնտեղ մի շարք շրջաններում ոչ միայն էլեկտրական լուսավորություն չկա, այլև բնավ ոչ բոլոր գյուղացիները հնարավորություն ունեն օգտվելու նավթի լամպերից։

Իսկ եթե, ընկերներ, նայենք անցյալին, ապա 40 տարի սրանից առաջ Հայաստանի բնակչությունը ապրում էր նույնպիսի պայմաններում, ինչպես դեռ այժմ էլ մարդիկ ապրում են ձեր հարևան կապիտալիստական երկրներում։ Իսկ ի՞նչը բարձրացրեց Հայաստանը։ Ի՞նչ հրաշք կատարվեց այստեղ։ Այդ հրաշքը Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխությունն է, այդ հրաշքը այն է, որ մեր ժողովուրդը ոտքի ելավ, իր ձեռքը վերցրեց իշխանությունը, դարձավ իր երկրի, իր կյանքի իսկական տերը։ (Բացականչություններ՝ «Ճիշտ է», բուռն, երկարատև ծափահարություններ)։

Արտասահմանում կոմունիզմի թշնամիները, որոնք խիստ ահաբեկված են մեր հաջողություններից, գիտեն, թե ժողովուրդների մեջ ինչպիսի նողկանք է հարուցում «ստրկություն» բառը։ Եվ ա՛հա որպեսզի թեկուզ մարդկանց մի մասի մեջ ատելություն արթնացնեն մեր երկրի դեմ, նրանք մեզ՝ սովետական մարդկանց, անվանում են «կոմունիզմի ստրուկներ»։ Նրանք, ինչպես տեսնում եք, կոպիտ են վարվում։ Նրանք պարզապես վերցնում են «ստրուկ» բառը և այն կապակցում «կոմունիզմ» հասկացողությանը։ Սակայն այնպիսի դյուրահավատ մարդիկ, որոնք առաջ ենթարկվում էին կոմունիզմի թշնամիների այդ խորամանկությանը, այժմ արդեն այնքան էլ հեշտ չեն դանի։ (Ուրախ աշխուժություն, բացականչություններ՝ «Ճիշտ է», ծափահարություններ)։

Ավելի ու ավելի են քչանում այնպիսի մարդիկ, որոնք չէին կարողանա իմանալ, թե ինչ է ստրկությունը և ինչ է կոմունիզմը։ (Երկարատև ծափահարություններ)։

Ստրկությունը, եթե խոսելու լինենք իշխանավորներից մարդկանց իրոք ստրկական կախման մասին, ոչ թե մեզ մոտ է, այլ կապիտալիստական երկրներում, որտեղ մոնոպոլիստները անողոքաբար շահագործում են աշխատանքի մարդկանց։ Եվ ոչ թե մենք սովետական մարդիկ ենք ստրուկներ, այլ կապիտալիստական երկրների մարդիկ են կապիտալիզմի ստրուկները։ (Ծափահարություններ)։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, որ մեզ մոտ արտադրության բոլոր միջոցները, այն ամենը, ինչ մարդիկ ստեղծում են իրենց աշխատանքով, այդ ամենը հասարակության համար է, այդ ամենը ժողովրդի համար է։ Իսկ կապիտալիստական երկրներում միլիոնավոր և միլիոնավոր մարդկանց աշխատանքի պտուղները յուրացնում է կապիտալիստների, մոնոպոլիստների համեմատաբար ոչ մեծ մի խումբ։ Եվ ահա այդ բանի արդյունքներից մեկը՝ Սովետական Հայաստանը այժմ ողողված է էլեկտրական լույսով։ (Ծափահարություններ)։ Իսկ ինչո՞ւ այնտեղ՝ ձեր հարևան կապիտալիստական երկրներում, որտեղ, ինչպես պնդում են կապիտալիզմի, իմպերիալիզմի գաղափարախոսները, ապրում են «ազատ ժողովուրդներ», իսկ ինչո՞ւ այդ «ազատ ժողովուրդները», ձեր հարևանները գոյություն են քարշ տալիս տառացիորեն խավարում։ Բայց չէ՞ որ այնտեղ գոյություն ունի «ազատություն»։ Իսկ դա ի՞նչ ազատություն է, եթե մարդիկ ապրում են խավարում։ (Բացականչություններ՝ «Ճի՛շտ է, ճիշտ է»։ Երկարատև ծափահարություններ)։

Ի՞նչ է ազատությունը բուրժուայի ըմբռնումով, կապիտալիստների, մոնոպոլիստների ըմբռնումով։ Նրանց ըմբռնումով ազատությունը աշխատավոր ժո-

ղովրդին անողոքարար կողոպտելու ազատությունն է նրանց կողմից, ովքեր կապիտալ ունեն, ովքեր տիրում են արտադրության բոլոր միջոցներին։ Ահա սա է նրանց «ազատությունը»։ Իսկ մենք ասում ենք, դա ոչ թե ազատություն է աշխատանքի մարդկանց համար, ժողովրդական զանգվածների համար, այլ ստրկական գոյություն է։ Մենք դեմ ենք շահագործողների մի փոքր խմբի կողմից կապիտալի օգտագործմանը, արտադրության միջոցների օգտագործմանը։ Մենք վճռական հակառակորդներն ենք այնպիսի հասարակարգի, երբ կապիտալիստները, մոնոպոլիստները անխիղճ կերպով շահագործում են նրանց, ովքեր միայն իրենց բանվորական ձեռքերն ունեն, ովքեր ապրում են իրենց ազնիվ աշխատանքի հաշվին. մենք հակառակորդներն ենք նրանց, ովքեր աշխատավորների միլիոնավոր զանգվածներից քամում են բոլոր ուժերը, ընդհուպ մինչև արյան վերջին կաթիլը, քամում են քրտինքը իրենց կապիտալները ավելացնելու համար, սեփական հարստացման համար։ (Երկարատև ծափահարություններ):

Եվ մենք կապիտալիստներին դեռ ցույց կտանք, թե ժողովուրդը ինչպիսի հաջողություններ է հասնում սոցիալիզմի օրոք, ցույց կտանք, թե սոցիալիստական հասարակության մարդիկ ինչպիսի մեծ գործեր են կատարում, այն մարդիկ, որոնց մոնոպոլիստները անվանում են «կոմունիզմի ստրուկներ»։ (Ծափահարություններ):

Մոնոպոլիստները դողում են իրենց սեյֆերի համար, դե թող դողան։ Մեզանից, Սովետական Միությունից չի բխում մոնոպոլիստների սեյֆերին սպառնացող վտանգը. նրանք ամենից ավելի շատ վախենում են սեփական ժողովուրդների սպառնալիքից, որոնք վաղ թե ուշ նույնպես կցանկանան ընթանալ այն ուղիով, որով մենք հիանալի կերպով ընթանում ենք ահա արդեն գրեթե 44 տարի։ (Բուռն ծափահարություններ):

Էներգետիկ հզոր բազան, բազմահարուստ բնական ռեսուրսները հնարավորություն ընձեռեցին չտեսնված կարճ ժամկետներում անցկացնել ժողովրդական տնտեսության ինդուստրացումը։ Սովետական իշխանության տարիներին կառուցվեցին մոտ 500 գործարան, ֆաբրիկա և այլ խոշոր արդյունաբերական ձեռնարկություն։ Միայն հետպատերազմյան ժամանակաշրջանում կառուցվել են այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպես Երևան քաղաքի ալյումինի գործարանը, պղնձամոլիբդենային կոմբինատները, Ախթալայի հանքերը, զգալիորեն ընդլայնվել են Ալավերդու պղնձաքիմիական և Ղափանի պղնձահանքային կոմբինատները։ Այժմ ռեսպուբլիկան ունի հզոր, առաջավոր տեխնիկայով հագեցած բազմաճյուղ արդյունաբերություն, որը հաստատորեն առաջատար տեղ է գրավել ռեսպուբլիկայի էկոնոմիկայի մեջ։ Ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրության ծավալը 1913 թվականի համեմատությամբ ավելացել է գրեթե 70 անգամ։

Լեռնահանքային արդյունաբերությունը և գունավոր մետալուրգիան, սարքաշինությունը և հաստոցաշինությունը, էլեկտրատեխնիկական խոշոր գործարանները, թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկությունները. ահա թե այժմ ինչն է որոշում Սովետական Հայաստանի դեմքը։

Հայաստանում բուռն տեմպերով է զարգանում քիմիական արդյունաբերությունը։ Ռեսպուբլիկայի քիմիական ձեռնարկություններում, որոնց արտադրության ծավալը 1940 թվականի համեմատությամբ աճել է 21 անգամ, այժմ արտադրվում են ավելի քան 60 տեսակի զանազան արտադրանքներ, որոնք կարևոր նշանակություն ունեն մեր երկրի էկոնոմիկայի զարգացման համար։

Ռեսպուբլիկայի ինդուստրացման պայքարում աճեց ու կոփվեց Հայաստանի բանվոր դասակարգը, աճեցին ինժեներների ու տեխնիկների՝ արտադրության կազմակերպիչների հրաշալի կադրեր։ Ավագ սերնդի ընկերները հիշում են, իսկ երիտասարդությունը դա իմանում է պատմությունից ու գրականությունից, որ նախաառևոլյուցիոն Հայաստանում ըստ էության արդյունաբերություն չկար։ Կային սոսկ կիսատնայնագործական մանր ձեռնարկություններ։ Բանվոր դասակարգը փոքրաթիվ էր։ Իսկ այսօր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ աշխատում են ավելի քան 400 հազար բանվորներ, ինժեներներ։ տեխնիկներ. ծառայողներ, որոնք տիրապետել են բարդ տեխնիկային։

Սովետական Հայաստանում քիմիական արդյունաբերության հետագա զարգացման համար նոր լայն հեռանկար է բացում բնական գազի մատակարարումը Եղբայրական Ադրբեջանից։

Գազամուղի կառուցումը լուծում է ոչ միայն վառելիքի պրոբլեմը և բարելավում է բնակչության կենցաղը, այլև էժան հումք է տալիս արդյունաբերությանը։ Հայաստանի քիմիական արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը ամբողջությամբ վերցրած յոթնամյակում կավելանա 3,3 անգամ։

Անդրկովկասի աշխատավորները Բաքու—Թբիլիսի—Երևան գազամուղը անվանել են ժողովուրդների բարեկամության գազամուղ։ Դա շատ լավ և ճիշտ անվանում է։ Վերջերս Հայաստանի էներգետիկ սիստեմը միացավ Ադրբեջանի և Վրաստանի եղբայրական ռեսպուբլիկաների էներգասիստեմների հետ։ Դրանով իսկ ստեղծվեց Անդրկովկասի միասնական էներգետիկ սիստեմ, որը անդրկովկասյան բոլոր ռեսպուբլիկաների արդյունաբերության հետագա զարգացման հուսալի հիմքն է։

Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների ժողովուրդները իրենց բարեկամությունը կռել ու կոփել են ազատության, նոր կյանքի կառուցման համատեղ պայքարի բազում տասնամյակների ընթացքում։ Ժողովուրդների բարեկամությունը Սովետական իշխանության մեծագույն նվաճումներից մեկն է, հարկավոր է փայփայել, պահպանել և զարգացնել եղբայրական այդ բարեկամությունը։

Սովետական մարդկանց, այդ թվում Հայաստանի աշխատավորների անսահման սերը Հայրենիքի նկատմամբ, նրանց գաղափարական անհողդողդ համախմբվածությունը փայլուն կերպով դրսևորվեցին Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։ Մեր երկրի ժողովուրդները ուս-ուսի տված ոչ միայն պաշտպանեցին մեր Հայրենիքի պատիվն ու անկախությունը, այլև ամբողջ մարդկությանը փրկեցին ֆաշիստական ստրկացումից։ Հայ ռազմիկների հերոսական գործերը բարձր են գնահատվել պարտիայի ու կառավարության կողմից, 106 մարդ արժանացել է Սովետական Միության Հերոսի բարձր կոչման, մոտավորապես 70 հազար մարդ պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով։ Հայ ընկերների շարքերից առաջ քաշվեցին հիանալի զորավարներ։ Ես լավ եմ ճանաչում Սովետական Միության Մարշալ Իվան Խրիստաֆորովիչ Բագրամյանին։ (Երկարատև ծափահարություններ): Ինձ վիճակվել է նրա հետ միասին երկար ժամանակ լինել Հայրենական պատերազմի ռազմաճակատներում։ Մեր Ռազմա-Ծովային ուժերի շինարարության գործում նշանակալի դեր է խաղացել ծովակալ Ի. Ս. Իսակովը։ (Ծափահարություններ): Հայրենական պատերազմում

աչքի ընկան ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակովը (ծափահարություններ) և շատ ուրիշներ։

Ես կարող էի հիշատակել շատ հայերի անուններ, որոնք աչքի ընկնող դեր են խաղացել Հայրենական Մեծ պատերազմում։ Երբ ես Կիևի ռազմական օկրուգի (որը հետո վերանվանվեց Հարավ-Արևմտյան ռազմաճակատ) ռազմական խորհրդի անդամ էի, իսկ Իվան Խրիստաֆորովիչը գնդապետ էր, օպերատիվ բաժնի պետ, մեզ մոտ զորատեսակների շատ հրամանատարներ հայեր էին, օրինակ՝ Բարսեղովը, Տամրուչին, Գալաջևը, Առուշանյանը, Տեր-Գասպարյանը։ Դուք գիտեք, որ Ի. Ֆ. Թևոսյանը պատերազմի ժամանակ զեկավարում էր երկրում մետաղի արտադրությունը և հիանալի էր աշխատում։ (Ծափահարություններ)։ Դուք, իհարկե, սրանից ճիշտ հետևություն եք անում։ (Ծափահարություններ)։ Այդպես էր մեր ռազմաճակատում։ Դա, իհարկե, ամենուրեք չէր, քանի որ ձեր ժողովուրդը ավելի փոքր է, քան մյուս ժողովուրդները, ասենք, ռուս կամ ուկրաինական ժողովուրդը։ Թե չէ ձեզանից ոմանք կարող են քիթը ցցել, իսկ չէ՞ որ դա օգուտ չի բերում։ (Ուրախ աշխուժություն։ Ծափահարություններ)։

Մի խոսքով, ես այն ժամանակ Իվան Խրիստաֆորովիչին ասում էի. հայ ժողովուրդը փոքր է, բայց ամեն տեղ իր ներկայացուցիչներն ունի։ (Աշխուժություն դահլիճում։ Ծափահարություններ)։

Ես արդեն մի անգամ պատմել եմ, որ երբ 1954 թվականին մեր պատվիրակությունը Չինաստանում էր, մենք այցելեցինք Պորտ-Արտուր՝ հանդիպելու սովետական ռազմիկներին, տեսնելու, թե նրանք որքանով են պատրաստ։ Եթե իմպերիալիստները հարձակվեն Պորտ-Արտուր ամրոցի վրա։ Գնացինք գիտելու ամրոցային մի ծանր մարտկոց։ Հանկարծ բլինդաժից դուրս է ցատկում մի գեղեցիկ երիտասարդ և զեկուցում, որ ինքը հրետանային դիվիզիոնի հրամանատար Կարապետյանն է։ (Աշխուժություն դահլիճում)։

Եկանք Հեռավոր Արևելք։ Մեկնեցինք Ռուսկի կղզին, որը պահպանում է Վլադիվոստոկի մուտքը։ Սկսեցինք ծանոթանալ։ Դարձյալ դուրս է վազում նույնպիսի մի հեռանդուն երիտասարդ հրամանատար, որի ազգանունը, կարծեմ, Գասպարյան էր կամ ինչ-որ նման բան, և զեկույց է տալիս։ (Աշխուժություն դահլիճում։ Ծափահարություններ)։ Ես այն ժամանակ Անաստաս Իվանովիչ Միկոյանին կատակով ասացի.— Այդ երևի դու ես չորս կողմը հայեր դրել։ (Աշխուժություն դահլիճում)։

Այսօր Իվան Խրիստաֆորովիչը ինձ հիշեցրեց, որ երբ մենք դիտում էինք ատոմային ու ջրածնային ռումբերի կառուցվածքը,— դա փակ դիտում էր,— դարձյալ մոտենում է մի հայ և զեկուցում է։ (Աշխուժություն դահլիճում։ Ծափահարություններ)։

Ի՞նչ է վկայում դա, ընկերնե՛ր։ Դա վկայում է, որ մեր երկրում բոլոր ժողովուրդները հնարավորություն են ստացել դրսևորելու իրենց ընդունակությունները թե՛ գիտության ասպարեզում, պաշտպանական գործերի ասպարեզում, և թե՛ կուլտուրայի ասպարեզում։ (Ծափահարություններ)։ Ուստի, անկախ ազգանունների վերջավորություններից լինի «ով», «յան» կամ «յան» կամ ազգանունների այլ վերջավորություններ, որպիսիք կան մեր Սովետական Միության ռեսպուբլիկաներում, բոլորի համար դռները բաց են։ Յուրաքանչյուրը կարող է ստեղծագործել հօգուտ մեր Հայրենիքի։ (Բուռն ծափահարություններ։ «Ուռա» բացականչություններ)։

Մենք հպարտանում ենք դրանով։ Դա աշխատավորների, մեր Սովետական Միության բոլոր ժողովուրդների նվաճումն է։ Դա լենինյան ազգային քաղաքականության նվաճումն է, և մենք պետք է ամեն ինչ անենք էլ ավելի ամրապնդելու մեր Հայրենիքի ժողովուրդների բարեկամությունը։ (Բուռն ծափահարություններ):

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Սովետական Հայաստանը, ինչպես և մեր ամբողջ երկիրը, խոշոր քայլ է կատարել էկոնոմիկայի, կուլտուրայի զարգացման, ժողովրդի բարեկեցության բարձրացման ասպարեզում։

Մեր երկրի զարգացման գործում կարևոր էտապ է հանդիսանում յոթնամյա պլանը։ Այն հաջողությամբ է կատարվում։

Ամբողջ Սովետական Միությունը և մասնավորապես ձեր ռեսպուբլիկան գերազանցում են ժողովրդական տնտեսության զարգացման նախատեսված տեմպերը։ Յոթնամյակի առաջին երկու տարում Հայկական ռեսպուբլիկայում արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը տարեկան պլաններով նախատեսված 18 տոկոսի փոխարեն ավելացել է 25 տոկոսով։

Հաճելի ու բերկրալի է լսել, որ ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները, սոցիալիստական մրցության մեջ մտնելով ՍՄԿՊ առաջիկա XXII համագումարի պատվին, հաջողությամբ են ավարտել 1961 թվականի առաջին եռամսյակը, համախառն արտադրանքի արտադրության պլանը կատարելով 103 տոկոսով։

Յոթնամյա պլանի կատարման պայքարի առաջավոր գծում անձնվիրաբար աշխատում են Հայաստանի տասնյակ հազարավոր առաջավոր բանվորներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ։ Համաժողովրդական հարգանք են վայելում Ղափանի պղնձահանքային կոմբինատի բրիգադավար Աշոտ Մելքոնյանը, Կիրովի անվան գործարանի ապարատավարների բրիգադավար Սերգեյ Ամիրխանյանը, «Քաղբնակշին» տրեստի որմնադիր Խաչիկ Կոշկակարյանը, որոնք արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչման։ Կոմունիստական աշխատանքի բրիգադներում հաջողությամբ աշխատում են էլեկտրալամպերի գործարանի բանվոր Ալեքսանդր Բորիսովը, Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի փականագործ Բատիշ Գրիգորյանը, Լենինականի գուլպայի ֆաբրիկայի հյուսող բանվորուհի Ռեթզեմ Արզարյանը և շատ ու շատ ուրիշներ։ (Երկարատև ծափահարություններ):

Ռեսպուբլիկայի բանվոր դասակարգի խանդավառությունն ու աշխատանքային սխրագործությունները վստահություն են ներշնչում, որ յոթնամյա պլանի առաջադրանքները կկատարվեն ու կգերակատարվեն։

Բայց հաղթանակն ինքն իրեն չի գալիս։ Յոթնամյա պլանի խնդիրները կատարելու համար հարկավոր է դեռ շատ ու լարված աշխատել։ Հարկավոր է այսուհետև ևս անընդհատ մեծացնել արտադրական կարողությունները։ Չէ՞ որ յոթնամյա պլանով ռեսպուբլիկայի արդյունաբերությունը պետք է աճի ավելի քան երկու անգամ։

Պատմում են, որ Կովկասում տոնական սեղանի շուրջը ընդունված չէ տանտիրոջը տհաճ բաներ ասել։ Բայց հոբելյանի օրերին հարկավոր է խոսել թե՛ հաջողությունների, թե՛ թերությունների մասին։ Դա բխում է մեր ընդհանուր գործի շահերից։ Ահա թե ինչու ես ուզում եմ տոնական այս օրը ձեզ որոշ բան ասել ոչ միայն նվաճումների մասին, այլև ձեր աշխատանքի մի քանի թերությունների մասին։ Կարծում եմ, որ դուք դրա համար ինձանից չեք նեղանա։

Թույլ տվեք ինձ այդ լավ կանոնից շեղվել։ Որպեսզի տոնական լավ սեղան լինի, լավ հորելյան լինի, պետք է, իհարկե, մինչև հորելյանը և հորելյանից հետո լավ աշխատել։ Այդ ժամանակ ուրախանալու և նրանց նշելու բան կլինի, ովքեր հորելյան են տոնում։ Ուստի հորելյանի օրը պետք է խոսել ոչ միայն հաջողությունների, այլև թերությունների մասին։

Նիստից առաջ որոշ ընկերներ ինձ հարցնում էին, թե ես քննադատական դիտողություններ կանե՞մ արդյոք։ Ես ասացի, թերևս ոչ այն չափով, որչափով ես այդ բանն արդեն արել եմ վերջերս տեղի ունեցած խորհրդակցություններում։ (Աշխուժություն դահլիճում, ծափահարություններ)։ Բայց իմ բնավորությունը թույլ չի տալիս քննադատական դիտողություններ չանել, եթե ես աշխատանքում թերություններ եմ տեսնում։ Կրկնում եմ, դա մեր ընդհանուր գործի օգտին է։ Մենք չենք վախենում քննադատությունից։ Քննադատությունից հետո մենք ավելի ուժեղ ենք դառնում։

Կարևոր այն խնդիրները, որ պետք է լուծել յոթնամյակում, պահանջում են մոբիլիզացնել եղած բոլոր ռեզերվները։ Իսկ ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ ռեզերվները մինչև օրս ամենևին լրիվ չեն օգտագործվում։ Շեղ մոտ դեռ կան այնպիսի ձեռնարկություններ, որոնք չեն կատարում արտադրանքի թողարկման և աշխատանքի արտադրողականության բարձրացման պետական առաջադրանքները, որոշ գործարաններում թույլ են տրվում անարտադրողական մեծ ծախսեր, կորուստներ խոտանից, արտադրանքի որակը ցածր է լինում։

Երեկ ես դիտեցի Ժողովրդական տնտեսության նվաճումների ռեսպուբլիկական ցուցահանդեսը։ Այդպիսի ցուցահանդեսով և այդպիսի ցուցանիշներով ամեն մի ռեսպուբլիկա կարող է հպարտանալ։ Ցուցահանդեսում ներկայացված են հիանալի հաշվիչ մեքենաներ, սարքեր, խառատային, ֆրեզերային լավ հաստոցներ, ժողովրդական սպառման շատ իրեր և առարկաներ։ Խիստ հետաքրքրական ցուցահանդես է։ Նայում եմ էքսպոնատները և տեսնում ժապավենավոր մանկական մի գլխարկ։ Դա ծովային գլխարկ է, բայց անկեղծորեն կասեմ, այն բավականին անպետք բան է։ Ես վերցրի այն, ցույց տվեցի ընկերներին և հարցրի՝ ինչի համար է ժապավենի վրա խարիսխ ունեցող մանկական գլխարկը, որը պետք է դուր գա ոչ միայն երեխային, այլև մայրիկին ու հայրիկին, որը պետք է ծառայի ոչ միայն երեխայի գլուխը ծածկելու համար, այլև զարդարանքի համար։ Ինչո՞ւ ուրեմն այդպիսի վատ գլխարկ պատրաստել, և այն էլ ներկայացնել ցուցահանդեսում։ (Միծաղ դահլիճում, ծափահարություններ)։ Ինչո՞ւ եք խայտառակում ձեր ձեռնարկությունների պատիվը։ Չէ՞ որ դուք կարողանում եք պատրաստել լավ, գեղեցիկ իրեր։ Ինչո՞ւ այդպիսի ոչ հարգալից վերաբերմունք եք ցուցաբերում դեպի մարդկանց աշխատանքը, դեպի սեփական աղգային հպարտությունը։ Ընկերները ինձ հետ համաձայնեցին և ասացին. Մենք կվերցնենք այս գլխարկը (ծիծաղ)։ Հավանորեն արդեն վերցրել են։ Այն հարկավոր է վերցնել ոչ միայն ցուցահանդեսի ստենդից, այլև հանել արտադրությունից, փոխարինել լավ, գեղեցիկ իրով, չթողարկել վատ իրեր։ (Աշխուժություն դահլիճում, ծափահարություններ)։

Չի կարելի հաշտվել նաև այն բանի հետ, որ պետության կողմից բնակարանային շինարարության համար բաց թողնվող միջոցները լրիվ չեն իրացվում։ Ռեսպուբլիկայի շինարարական կազմակերպությունների անբավարար աշխատանքի հետևանքով բնակարանային շինարարության պլանը պետական կապիտալ ներդրումների գծով 1960 թվականին ըստ ծավալի կատարվել է միայն 95

տոկոսով, իսկ ըստ բնակտարածության շահագործման հանձնման՝ 78 տոկոսով։ Ռնսպուրլիկայի աշխատավորները պակաս են ստացել մոտ 50 հազար քառակուսի մետր բնակարան։

Այս երկու օրերին, երբ գտնվում եմ ձեզ մոտ, աշխատավորներից շատ նամակներ եմ ստացել։ Դրանց մեծ մասը վերաբերում է բնակարանին։ Բնակարանային հարցը սուր հարց է։ Ուստի հարկավոր է ավելի լավ վերաբերվել այն միջոցների օգտագործմանը, որոնք հատկացվում են բնակարանային շինարարությանը՝ մարդկանց բարեկարգ բնակարաններով ապահովելու համար։

Ես առաջին անգամն եմ լինում Հայաստանում և առաջին անգամ ձեր մայրաքաղաք Երևանում։ Ինձ պատմում էին, որ ձեզ մոտ հյուր եկող այն հայերը, որոնք ռևոլյուցիայի առաջին տարիներից այստեղ չեն եղել,— նրանք ձեր հյուրերն են դարձել, որովհետև ապրում են այլ վայրերում,— ասում են, որ այժմ ամեն ոք կարող է հպարտանալ Երևանով, որպես հայ ժողովրդի մայրաքաղաքով։ (Ծափահարություններ)։

Դեռևս վերացած չէ այն անպետք պրակտիկան, երբ շահագործման են հանձնվում լուրջ թերություններ ունեցող տներ։ Մի՞թե կարելի է նորմալ համարել այն, երբ նույնիսկ Երևան քաղաքում ընդունվել են այնպիսի տներ, որոնցում սարքին չի եղել էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը, եղել են այլ էական պակասություններ։ Հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել շինանյութերի արդյունաբերության հետագա զարգացմանը, ավելի համարձակորեն արմատավորել դրանց արտադրության ժամանակակից մեթենայացված եղանակները։

Ընկերնե՛ր։ Վերջին տարիներին մեր պարտիան իրագործեց այնպիսի միջոցառումներ, որոնք հանգեցրին կոլտնտեսային կարգի հետագա ամրապնդմանը, սովխոզների զարգացմանը, հացահատիկի, անասնաբուծության մթերքների արտադրության շեշտակի ավելացմանը, գյուղատնտեսության բոլոր ճյուղերի վերելքին։

Գյուղատնտեսության զարգացման գործում խոշոր հաջողությունների են հասել նաև Հայկական ՍՍՌ-ի աշխատավորները։ Կոլտնտեսային կարգի հաղթանակով Հայաստանի գյուղատնտեսությունը արմատապես վերափոխվեց։ Բացվեցին գյուղատնտեսական արտադրության աճի անսահմանափակ հնարավորություններ։ Հսկայական նշանակություն ունեն նախապատերազմյան հրնգամյակների տարիներին ռեսպուբլիկայում ստեղծված հզոր ոռոգիչ սիստեմները, որոնք կյանքի են կոչել հազարավոր հեկտար հողատարածություններ, որոնք առաջ չէին կարող օգտագործվել։

Կոլտնտեսություններն ու սովխոզները այժմ այնպիսի նյութատեխնիկական բազա ունեն, որը հնարավորություն է տալիս գյուղատնտեսությունը վարել ժամանակակից ագրոտեխնիկական գիտության բոլոր կանոնների համաձայն, արտադրողարար օգտագործել հողը և ըստ ամենայնի հեշտացնել կոլտնտեսականների աշխատանքը։ Այսուհետև ևս անընդհատ կաճի կոլտնտեսությունների և սովխոզների տեխնիկական զինվածությունը։ Այժմ բանն այն է, որ լավագույն ձևով օգտագործվի այդ տեխնիկան, ձեռք բերվեն աշխատանքի արտադրողականության բարձր ցուցանիշներ։

Հայաստանի կոլտնտեսությունների և սովխոզների աշխատավորները քիչ նվաճումներ չունեն։ 1960 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, գյուղատնտեսության համախառն արտադրանքը համադրելի գներով ավելացավ

գրեթե երեք անգամ։ Կոլտնտեսությունների հանրային տնտեսությունը տարեցտարի ամրապնդվում է, անբաժանելի ֆոնդերը աճում են, կոլտնտեսությունների եկամուտները ավելանում են։

Այն խոշոր հաջողությունների համար, որ գյուղատնտեսության աշխատավորները ձեռք բերեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու պետությանը բամբակի հումք, շաքարի ճակնդեղ, հացահատիկ, միս, կաթ և բուրդ վաճառելու պլանները կատարելու և գերակատարելու գործում, Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան 1958 թվականին պարգևատրվեց բարձր պարգևով՝ Լենինի շքանշանով։ (Բուռն ծափահարություններ)։

Հաճելի է նշել, որ 1960 թվականին ռեսպուբլիկայում ժամկետից շուտ կատարվեց պետությանը բամբակի, մսի, կաթի և շաքարի ճակնդեղի վաճառքի պլանը։

Հայկական ՍՍՌ-ն բնական-տնտեսական բարենպաստ պայմաններ ունի գյուղատնտեսության բոլոր ճյուղերը և հատկապես անասնաբուծությունը, խաղողագործությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը զարգացնելու համար։

Սակայն պետք է խոստովանել, որ ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ եղած հնարավորություններն ու ռեզերվները դեռևս անբավարար են օգտագործվում։ 1960 թվականին չկատարվեցին պետությանը խաղողի, բանջարեղենի վաճառքի պլանները։ Վերջին տարիներին ռեսպուբլիկայում թույլ է տրվել հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների կրճատում։ Բայց չէ՞ որ դա ձեր պայմաններում անթույլատրելի երևույթ է։ 1960 թվականին, օրինակ, 1953 թվականի համեմատությամբ ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում և սովխոզներում հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը կրճատվեց ավելի քան 130 հազար հեկտարով, իսկ կերի կուլտուրաների ցանքերը չափազանց անբավարար ընդլայնվեցին։

Պետք է նշել, որ ռեսպուբլիկայում դանդաղ է զարգանում անասնապահությունը։ Միանգամայն անթույլատրելի է, որ ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում և սովխոզներում կերի պակասության պատճառով անցյալ տարի տեղի ունեցավ ոչխարների մեծ անկում։

Չէ՞ որ սա փաստ է։ Ոչխարը հարկավոր է լավ սեղանի համար, որ լավ խորոված լինի։ (Աշխուժություն դահլիճում, ծափահարություններ)։ Այժմ ընկ. Մժավանաձեն, հավանաբար, մտածում է։ Այդ բանը Խրուշչովը։ հավանաբար, Վրաստանում էլ կասի։ Ճի՛շտ եք մտածում։ Որպեսզի դադարենք այս թերությունների մասին խոսել, պետք է այնպես անել, որ նմանօրինակ թերություններ չլինեն, պետք է դադարել ոչխարները խեղդել։ (Աշխուժություն դահլիճում)։

Խաղողի, բամբակի, մսի, կաթի և մյուս մթերքների արտադրությունը տարեցտարի ավելացնող՝ ռեսպուբլիկայի գյուղատնտեսության առաջավորների հիանալի շատ հաջողությունները ցույց են տալիս, որ, հավասարվելով առաջավորներին, Հայաստանի կոլտնտեսություններն ու սովխոզները բոլոր հնարավորություններն ունեն գյուղատնտեսական արտադրության ավելի արագ աճի համար։

Պրեզիդիումը միայն որոշ օրինակներ գյուղատնտեսության առաջավորների փորձից։ Կալինինոյի շրջանի Սարատովկա գյուղի կոլտնտեսությունը, որի նախագահն է ընկ. Ավդալյանը, անցյալ տարի գյուղատնտեսական հողատարածու-

թյան հարյուր հեկտարի դիմաց արտադրեց 53,4 ցենտներ միս, 494 ցենտներ կաթ։

Յուրաքանչյուր կովից ստացվել է 3.112 կիլոգրամ կաթ, մինչդեռ ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում և սովխոզներում կաթի միջին արտադրությունը կազմել է 1.520 կիլոգրամ։

Ինարկե, Հայաստանի ղեկավարները կարող են ասել. հիմա 1.520 կիլոգրամ է, իսկ յոթ տարի առաջ մեկ կովի միջին կաթնատվությունը ընդամենը 300 կիլոգրամ էր։ Իր համար էլի քիչ է։ (Աշխուժություն դահլիճում)։ Այո՛, քիչ է։ Ինձ համար չէ քիչ, ձեզ համար է քիչ, որովհետև աճում է ռեսպուբլիկան, աճում է նրա տնտեսությունը, աճում են նրա էկոնոմիկան, կուլտուրան, աճում են ժողովրդի պահանջմունքները։ (Ծափահարություններ)։ Այն, ինչ արվել է յոթ տարում, դրա համար շնորհակալություն են հայտնել։ Վերջին տարիներին մենք անասնաբուծական մթերքների արտադրությունը ավելացրել ենք երկուերեք անգամ և ավելի։

Բայց դա՛ էլ բավական չէ։ Մենք դեռ չենք բավարարում այդ մթերքների ասպարեզում բնակչության պահանջմունքները։ Աճել են աշխատավորների եկամուտները, աճել են նաև պահանջմունքները։ Արտադրության աճը պետք է գերազանցի բնակչության պահանջմունքները։ Ուստի մի հանգստացեք արվածով։ Այն, ինչ արված է, լավ է։ Բայց հարկավոր է ավելի խստապահանջ լինել իր նկատմամբ՝ վաղը ավելի բարձր մակարդակի հասնելու և ավելի շատ տարբեր մթերքներ ու ապրանքներ արտադրելու համար, որպեսզի ժողովուրդը ավելի ու ավելի լրիվ բավարարի իր պահանջմունքները։

Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի կոլտնտեսության հովիվ ընկ. Թունյանը 369 ոչխարից յուրաքանչյուրից ստացել է 5,4 կիլոգրամ բուրդ և 100 մարիից 127 գառ։

Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղից Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ ընկ. Եղիազարյանի օղակը հեկտարից ստացել է 180 ցենտներ խաղող։ Օղակը պարտավորվել է ընթացիկ տարում խաղողի բերքատվությունը հասցնել 230 ցենտների։

Ուզում եմ, որ դուք ինձ ճիշտ հասկանաք։ Ես դավում եմ նոանց, ովքեր ստանում են խաղողի բարձր բերք, թեև խաղողագործները ասում են։ որ խաղողի մեկ հեկտարի մեծ բերքը միշտ չէ, որ բարիք է, որովհետև, եթե ջուր տրվի ոչ ժամանակին, ապա կարելի է ստանալ խաղողի բարձր բերք, բայց նա վատը կլինի։ Եթե մարդը խմի այդպիսի խաղողի հյութը, ապա աչքերը կփակի ոչ թե բավականությունից, այլ թթվությունից։ Ուստի ամեն ինչի մեջ պետք է չափ պահպանել, հարկավոր է արտադրել սպառման լավ մթերքներ։

Հոկտեմբերյանի շրջանի Մլասնիկյանի անվան կոլտնտեսության օղակավարուհի Սաթենիկ Մելոյանը անցյալ տարի հեկտարից ստացավ եգիպտացորենի 1.300 ցենտներ կանաչ զանգված և պարտավորվեց 1961 թվականին հեկտարից ստանալ 1.400 ցենտներ կանաչ զանգված։ Եգիպտացորենը՝ այդ կաթ է, միս է։

Ընկերնե՛ր։ Կոմունիստական շինարարության, ժողովրդի բարեկեցության անշեղ բարձրացման շահերը այժմ պահանջում են գյուղատնտեսության զարգացման այլ, ավելի արագ տեմպեր։ ՍՄԿՊ Կենտկոմի Հունվարյան պլենումը խնդիր դրեց, որ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը առաջ անցնի բնակչության պահանջարկից։

Հացահատիկի, մսի և կաթի արտադրությունն ավելացնելու՝ Կենտկոմի պլենումի նախատեսած միջոցառումները միանգամայն ռեալ և իրագործելի են։ Տարակույս չկա, որ Սովետական Հայաստանի գյուղատնտեսության աշխատավորները, լայնորեն ծավալելով սոցիալիստական մրցություն յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար, իրենց արժանի ավանդը կմուծեն երկրում սննդամթերքների և արդյունաբերական հումքի ավելացման պայքարի ընդհանուր գործում։ Նոր հաջողությունների կհասնեն կոմունիստական շինարարության գործում։ (Երևաբատև ծափահարություններ)։

Հայ ժողովուրդը կարող է իրավամբ հպարտանալ ժողովրդական կրթության, առողջապահության, ազգային կուլտուրայի, գիտության, գրականության և արվեստի զարգացման իր հաջողություններով։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում կատարված հսկայական աշխատանքի մասին պերճախոս կերպով վկայում են այն ապշեցուցիչ փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանում։

Ի՞նչ էր ներկայացնում Երևանը ռևոլյուցիայից առաջ։ Դա մոտավորապես 30 հազար բնակիչ ունեցող գավառական փոքրիկ քաղաք էր կավաշեն տների խիտ զանգվածներով։

Հմուտ շինարարների ձեռքով Երևանը Սովետական իշխանության տարիներին դարձել է իր ճարտարապետությամբ անկրկնելի ժամանակակից քաղաք, որտեղ բարձրանում են գործարանների ու ֆաբրիկաների, գիտական հիմնարկների ու թատրոնների նոր կորպուսներ և բազմահարկ լուսավոր բնակելի տներ։ Կարելի է առանց չափազանցության ասել, որ քաղաքը նոր է կառուցվել։

Ռեսպուբլիկան, որտեղ մինչև ռևոլյուցիան գրագետների թիվը տասը տոկոսից չէր անցնում, չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն և ստացիոնար թատրոն, այժմ պատված է դպրոցների, հիվանդանոցների, գիտական և կուլտուր-լուսավորական հիմնարկների խիտ ցանցով։ Այժմ հանրակրթական դպրոցներում սովորում են ավելի քան 300 հազար երեխաներ։

Աշխատավորներին լայն հնարավորություններ են տրվել բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու համար։ Միայն 1960 թվականին ռեսպուբլիկայում պատրաստվել են 6 500 ինժեներներ, տեխնիկներ, գյուղատնտեսներ, բժիշկներ, ուսուցիչներ և այլ մասնագետներ։

Աշխատավորների նյութական բարեկեցության հետագա բարելավման փայլուն վկայությունն է բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների ռեալ եկամուտների աճը։ Հայաստանում կոլտնտեսությունների դրամական եկամուտները 1953 թվականի համեմատությամբ կրկնապատկվել են։

Ծաղկել է հայ ժողովրդի կուլտուրան։ Սովետական Հայաստանը մեծ նվաճումներ ունի գիտության զարգացման ասպարեզում։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում աճել են գիտական աշխատողների սեփական կադրեր։ Ներկայումս տասը բարձրագույն ուսումնական հաստատություններում և 79 գիտական հիմնարկներում հաջողությամբ լուծվում են գործնական ու տեսական մեծ նշանակություն ունեցող խնդիրներ։ Հայաստանի գիտնականները հաջողությամբ մշակում են միջուկային ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, աստղագիտության, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբեռնետիկայի կարևոր պրոբլեմներ և այլն։ Համաշխարհային գիտության մեջ խոշորագույն ավանդ է մուծել Բյուրականի աստղադիտարանի կոլեկտիվը, որի ղեկավարն է Հայկական ՍՍՌ Գիտությունների

ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համազասպի Համբարձումյանը։ (Երկարատև ծափահարություններ):

Հայ գրականությունը արժանավայել տեղ է գրավում սովետական և համաշխարհային գրականության պատմության մեջ։ Նրա այնպիսի ականավոր ներկայացուցիչներ. ինչպիսիք են Հովհաննես Թումանյանը, Եղիշե Չարենցը և ուրիշներ, ստեղծել են հրաշալի երկեր, որոնք գտել են ոչ միայն հայ ժողովրդի, այլև մյուս ժողովուրդների ճանաչումը։ Ժամանակակից բանաստեղծներն ու գրողները, զարգացնելով լավագույն տրադիցիաները, ստեղծում են նոր Հայաստանի կյանքը գովերգող գործեր։

Նոր Հայաստանի կառուցմանը, կոմունիզմի կառուցմանը իրենց տաղանդն ու ներշնչանքն են նվիրում ձեր ռեսպուբլիկայի կուլտուրայի բազմաթիվ հիանալի գործիչներ։

Պատմությունը բավական համոզիչ կերպով հաստատում է, որ տաղանդների ծաղկումը, կուլտուրայի մեծ թռիչքները ազգի կյանքում լինում են այս ժամանակ, երբ դրա համար քաղաքական ու սոցիալական բարենպաստ պայմաններ են ստեղծվում։ Եվ մարդկության պատմության մեջ արվեստի գործիչների համար. գիտնականների համար, գրողների համար ավելի նպաստավոր, ավելի ստեղծագործական ու կենսուրախ մթնոլորտ չի եղել, քան մեր սոցիալիստական երկրում, այն երկրում, որը առաջինն է կառուցում կոմունիզմի հիասքանչ շենքը։

Ահա թե ինչու այնպես վառ ու ոգեշունչ է հնչում հայ կոմպոզիտորների երաժշտությունը։ Նրանցից շատերին, այդ թվում նաև այնպիսի մեծ վարպետի, ինչպիսին Արամ Խաչատրյանն է, ճանաչում են մեր ամբողջ երկրում, ճանաչում են ամբողջ աշխարհում։ (Ծափահարություններ): Արամ Իլյիչ Խաչատրյանը Լենինյան մրցանակի լաուրեատ է։ Վերջերս այդ բարձր պարգևին արժանացավ նշանավոր նկարիչ Մարտիրոս Սարյանը։ (Ծափահարություններ):

Կարելի է խոսել ձեր ռեսպուբլիկայի կուլտուրայի ուրիշ շատ ականավոր գործիչների մասին։ Հուսով եմ, որ նրանք չեն նեղանա, որ ես չեմ թվարկում նրանց անունները։ Ուզում եմ կանգ առնել Հայաստանի հրաշալի արտիստուհի Գոհար Բասպարյանի ճակատագրի վրա։ Օտարության մեջ նրա տաղանդը ճանաչում չգտավ։ Գալով Հայրենիք, Գոհար Գասպարյանը արևաշող Հայաստանում մարդկային մեծ երջանկություն ձեռք բերեց, դարձավ Սովետական Միության ժողովրդական արտիստուհի։ (Ծափահարություններ):

Աշխատանքի և ստեղծագործական գործունեության համար, ժողովրդին ծառայելու համար Հայրենիքը լայն հեռանկարներ բացեց հազարավոր հայերի համար, որոնք մի ժամանակ, զանազան պատճառների ու հանգամանքների բերումով, զրկվել էին իրենց Հայրենիքից։ Դառն ճակատագիրը աշխարհով մեկ ցրիվ է տվել հայ ազգը։ Շատ մարդիկ չդիմացան գոյության ծանր պայքարին, շատերն էլ դեռ այսօր ստիպված են քաշել հարկադրական աշխատանքի ծանր լուծը։

Ինձ պատմում էին, որ օտարության մեջ ապրող հայերը երգ են հորինել Ֆիծեռնակի մասին, որը ամեն տարի գարնանը թռչում է Հայաստան և ողջույն է բերում նրանցից, ովքեր գտնվում են տարբեր երկրներում։ Ըստ երևույթին, այդ ծիծեռնակը, վերադառնալով, ձեր ռեսպուբլիկայի մասին մարդկանց լավ բաներ շատ է պատմում։ Ահա թե ինչու հայերը սիրով վերադառնում են մայր երկիրը։ Նրանք վերադառնում են սոցիալիստական Հայաստան և լիակատար

հնարավորություն ունեն համեմատելու հայրենի վայրերի անցյալն ու ներկան, հնարավորություն ունեն համեմատելու, թե մարդուն ինչ է տալիս սոցիալիզմը և ինչ է տալիս կապիտալիզմը։

Հայրենիք վերադառնալը, առանձնապես, երբ մարդ ծնվել ու մեծացել է արտասահմանում և իր գիտակից կյանքի մեծ մասը այնտեղ է ապրել,— բարդ պրոցես է։ Չէ՞ որ այդ մարդիկ երկար ժամանակ գտնվել են բուրժուական պրոպագանդայի, կյանքի բուրժուական կանոնների ու նորմաների ազդեցության ներքո, պարզ ասած ստիպված են եղել գործել ըստ դայլի օրենքների։ Հարկավոր են համբերություն և տոկունություն այդ մարդկանց մեջ սովետական մարդու նոր գծեր դաստիարակելու գործում։ Սակայն անվիճելի է մի բան՝ Սովետական Սոցիալիստական Հայաստանն այժմ այն կենտրոնն է, մագնիսը, որն իրեն է քաշում հայ ժողովրդի լավագույն դուստրերին և որդիներին։ (Երկարատև ծափահարություններ)։

Պետք է որ ռեսպուբլիկական կազմակերպությունները այսուհետև էլ հոգատարություն ցուցաբերեն Հայրենիք վերադարձողների աշխատանքի ու կյանքի նկատմամբ։

Թանկագին ընկերնե՛ր։ Հայ ժողովրդի բոլոր մեծ հաջողություններն ու նվաճումները հնարավոր դարձան լենինյան իմաստուն ազգային քաղաքականության հետևողական կենսագործման, մեր երկրի բոլոր ժողովուրդների միջև սոցիալիստական նոր փոխհարաբերությունների՝ եղբայրական բարեկամության, փոխադարձ օգնության ու վստահության փոխհարաբերությունների ստեղծման շնորհիվ։

Սովետական երկրի ժողովուրդների մեծ բարեկամությունը, որը կոփվել է սոցիալիստական շինարարության ընթացքում, ամեն տեսակ նացիոնալիստական պարտիաների ու հոսանքների դեմ մղված պայքարում,— բազմազգ Սովետական պետության ուժի և հզորության հիմքը կազմող մեր ամենաթանկարժեք նվաճումներից մեկն է։

Ընկերնե՛ր։ Ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ասպարեզում մեր երկրի դրությունը շատ լավ է։ Սովետական մարդիկ վստահորեն ընթանում են առաջ, դեպի իրենց մեծ նպատակը։ Եթե ամբողջ աշխարհի մեր բարեկամները ուրախանում են մեր հաջողություններով, ապա իմպերիալիստների լագերում այդ հաջողությունները շփոթություն և չարություն են առաջ բերում։

Բոլորին հայտնի է, որ վերջին ժամանակներս տեղի ունեցավ միջազգային իրադրության սրում։ Բովանդակ աշխարհի ժողովուրդների մեջ մեծ տագնապ են հարուցում իմպերիալիստական ագրեսորների դավերը ընդդեմ Կուբայի ազատասեր ժողովրդի։

Իմպերիալիստական շրջանները հրահրում են պատերազմական պսիխոզ, ուժեղացնում են սպառազինությունների մրցավազքը, որը հանգեցնում է միջոցների խելացնոր վատնման։ Սպառազինությունների այդ մրցավազքը սանձազերծել են արևմտյան երկրների ռազմական մոնոպոլիաները, որոնք հարստանում են զենքի արտադրությունից։ Թե ժողովուրդների վրա ինչ է նստում սպառազինությունների այդ վտանգավոր մրցավազքը, կարելի է դատել թեկուզ այն բանից, որ ԱՄՆ-ում 1961—1962 թվականներին նախատեսված է ուղղակի ռազմական նպատակներով ծախսել 43 միլիարդ 800 միլիոն դոլար։

Իմպերիալիստները միլիոնավոր և միլիոնավոր մարդկանց աշխատանքը օգտագործում են ի վնաս աշխատավորների, քանի որ այդ աշխատանքը ծախս-

վում է մահարեր հրթիռա-միջուկային զենքի արտադրության և կուտակման համար։ Սպառազինությունների մրցավազքը, զենքի, հատկապես միջուկային զենքի կուտակումը ժողովուրդների համար չափազանց լուրջ վտանգներով է հղի։ Համաշխարհային նոր պատերազմը, եթե իմպերիալիստներին հաջողվի այն սանձազերծել, առաջ կբերեր այնպիսի վիթխարի զոհեր և նյութական արժեքների ավերածություններ, որոնք նույնիսկ դժվար է պատկերացնել։

Պարզ է, որ ժողովուրդները չեն կարող համաձայնել այն բանին, թե համաշխարհային նոր պատերազմը անխուսափելի է։ Ժողովուրդները պետք է միջոցներ ձեռք առնեն, որ իմպերիալիստական ատոմային մոլագարներին թույլ չտան մոխրակույտեր դարձնել քաղաքները, արգավանդ հողերն ու այգիները վերածել անբնակ անապատների։

Սովետական Միությունը, հզոր սոցիալիստական լագերը դարձել են մարդկության անխորտակելի պատվարը այն պայքարում, որ նա մղում է խաղաղության համար։ միջուկային ընաջնջիչ պատերազմը կանխելու համար։ Մեծ երջանկություն է, որ գոյություն ունեն Սովետական Միությունը, հզոր սոցիալիստական լագերը, որոնք կանգնած են խաղաղ գոյակցության դիրքերում։ Նրանք զսպող գործոն են ընդդեմ այն ուժերի, որոնք ձգտում են պատերազմ սանձազերծել։ (Ուրախություններ)։

Մենք չէ, որ սկսել ենք սպառազինությունների մրցավազքը համաշխարհային երկրորդ պատերազմից հետո։ Ընդհակառակը, մենք արել ենք և անում ենք ամեն ինչ, որ վերջ տանք սպառազինությունների մրցավազքին։ Բոլորին հայտնի են զինաթափման հարցերի վերաբերյալ Սովետական Միության առաջարկները։ Մենք այդ արմատական պրոբլեմին մոտենում էինք տարբեր կողմերից. առաջարկում էինք մասնակի միջոցառումներ և ընդհանուր բնույթի միջոցառումներ։ Միավորված Ազգերի Կազմակերպությանը ներկայացված է միջազգային խիստ վերահսկողությամբ ընդհանուր և լրիվ զինաթափման սովետական առաջարկը։ Մենք պարզ հայտարարեցինք՝ թող արևմտյան տերությունները ընդունեն զինաթափման մեր պլանը, և մենք այդ ժամանակ կընդունենք զինաթափման վերահսկողության նրանց ամեն մի պլան։ Զինաթափման մեր առաջարկների ընդունումը ոչ մի երկրի մյուսների համեմատությամբ ավելի վատ դրության մեջ չէր դնի։ Մինչդեռ դա հնարավորություն կտա մեկընդմիշտ վերջ տալ սպառազինությունների մրցավազքին։ Ժողովուրդները կարող էին իրենց բոլոր ջանքերը կենտրոնացնել տնտեսական մրցման վրա, իրենց կենսամակարդակի վերելքի պայքարի վրա։ Խաղաղ տնտեսական մրցության պայմաններում մի՞թե որևէ ժողովուրդ կտուժեր։ Անշուշտ, ո՛չ։

Մոտ ժամանակներս Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև պետք է զինաթափման հարցերին նվիրված բանակցություններ տեղի ունենան։ Մենք ամենայն լրջությամբ պատրաստվում ենք այդ բանակցություններին, և հուսով ենք, որ մյուս կողմը ևս նույնպիսի պատասխանատվությամբ կմոտենա այդ բանակցություններին։ Իսկ եթե որևէ մեկը կարծում է, թե այդ բանակցությունները կարելի է հանգեցնել դատարկ ձևականության, պրոցեդուրային հարցերի քննարկման, ապա թող այդ ժամանակ նրանք էլ իրենց վրա վերցնեն այդպիսի ոչ գործարար մոտեցման պատասխանատվությունը։ Ժողովուրդներն սպասում են, որ զինաթափման բանակցությունները դուրս գան անվերջ դիսկուսիաների փուլից, նրանք սպասում

Էն ոչ թե սպառազինությունների վերահսկողություն, այլ զինաթափում՝ վերահսկողությամբ։

Ամերիկայի Միացյալ Նահանգներում նոր կառավարության իշխանության գլուխ անցնելը որոշ մարդկանց մեջ հույսեր ստեղծեց։ Թե Միացյալ Նահանգների նոր ղեկավար գործիչները ավելի խելացի մոտեցում կցուցաբերեն դեպի միջազգային հարցերի լուծումը, այդ թվում նաև զինաթափման գործում։ Այդ բանը կհանգեցներ ամբողջ միջազգային իրադրության բարելավմանը։ Ինչ վերաբերում է Սովետական Միությանը, ապա մենք թե առաջ, թե այժմ ջանքեր ենք գործադրում, որպեսզի բարելավենք մեր հարաբերությունները արևմտյան երկրների հետ, այդ թվում նաև՝ Միացյալ Նահանգների հետ։ Դա չափազանց կարևոր է բոլոր երկրների շահերը շոշափող միջազգային կենսական հարցերի լուծման համար։

Մենք ցանկանում ենք լուծել զինաթափման պրոբլեմը, վերջ տալ համաշխարհային երկրորդ պատերազմի մնացորդներին Եվրոպայում, կնքել գերմանական հաշտության պայմանագիրը և դրանով իսկ վերացնել այն արգելքները, որոնք խանգարում են նորմալացնել երկրների հարաբերությունները, խանգարում են պահպանել և ապահովել ամբողջ աշխարհի խաղաղությունը։ Ժողովուրդները շահագրգռված են այն բանում, որ ստեղծվեն բոլոր պետությունների խաղաղ գոյակցության պայմաններ անկախ նրանց սոցիալական և քաղաքական կառուցվածքից։

Մեր նպատակները պարզ են։ Մենք մեզ համար ոչ մի այնպիսի բան չենք ցանկանում, որը վնասեր մյուս պետությունների կամ ժողովուրդների շահերին։ Սովետական կառավարությունը ամեն ինչ արել է և անում է, որ վերջ տա լարվածության օջախներին և հասնի պետությունների միջև եղած վիճելի հարցերի խաղաղ կարգավորմանը։

Մենք ափսոսում ենք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ագրեսիվ ուժերին հաջողվեց հերյուրել հարձակում Կուբայի Ռեսպուբլիկայի դեմ։ Ոչ միայն մեր ժողովուրդը, որը անկեղծ հարգանքով է վերաբերվում մյուս ժողովուրդներին, այլև մյուս երկրների բոլոր ազնիվ մարդիկ չկարողացան անտարբեր մնալ վարձկան բանդաների Կուբա կատարած ներխուժման դեմ հանդիման։

Պետք է նշել, որ բուն Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակ մարդկանց, ինտելիգենցիայի, ժուռնալիստների շրջանում և նույնիսկ հասարակական հայտնի գործիչների և կոնգրեսմեննների շրջանում հնչեցին այդ ավանտյուրիստական քաղաքականությունը դատապարտող ձայներ։

Ամբողջ աշխարհի ժողովուրդները զայրացած էին այն բանից, որ Կուբայի վրա, որը ոչ ոքի չի սպառնում, կատարվեց այդ ուխտադրուժ հարձակումը։ Եվ մեզ համար հասկանալի է ժողովուրդների այդ ցասումը։ Սովետական Միության կառավարությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը դիմեց ուղերձներով, որոնցում դատապարտեց զինված ներխուժումը և նախազգուշացրեց, որ այն կարող է ծանր հետևանքների հանգեցնել։

Կուբայի դեմ կատարված ագրեսիան հանգեցրեց միջազգային իրադրության սրմանը։ Սակայն մենք կցանկանայինք լավատեսորեն նայել երկրագնդի այդ շրջանում իրադարձությունների հետագա զարգացմանը։ Ժողովուրդներն սպասում են, որ ԱՄՆ-ի պետական գործիչները ճիշտ հետևություններ կանեն և անհրաժեշտ դասեր կառնեն տեղի ունեցածից։

Կուրան ագրեսիայի զոհ դարձավ, բայց նրա զեկավարները երևան բերեցին ոչ միայն խելացի մոտեցում, այլև աղնվություն, առաջարկելով բանակցություններ վարել ԱՄՆ-ի հետ՝ երկու երկրների հարաբերությունների լարվածությունը վերացնելու և Կարիբյան ծովի շրջանում իրադրությունը նորմալացնելու համար։ Կուրան և ԱՄՆ-ը հարևաններ են ու պետք է ապրեն ինչպես բարի հարևանները։ ԱՄՆ-ում որոշ ողջախոհ, զգոն մարդիկ կոչ են անում գործել՝ ապրիր և մյուսներին թույլ տուր ապրել սկզբունքով։ Լավ կլիներ եթե ԱՄՆ-ը այդ սկզբունքը կիրառեր Կուբայի և մյուս երկրների հետ ունեցած իր հարաբերություններում։ Այդպիսի մոտեցումը փոխադարձ օգուտ կբերեր թե՛ Կուբային, թե՛ ԱՄՆ-ին, ոչ որի հեղինակությանը վնաս չհասցնելով։ (Մափսահարություններ)։

Իսկ եթե, սակայն, հակառակ ողջախոհության, ԱՄՆ-ի իմպերիալիստները դիմեն Կուբայի Ռեսպուբլիկայի դեմ ուղղված նոր բացահայտ ավանտյուրայի, ապա կստեղծվի մի դրություն, որը լուրջ հետևանքներով է հղի ամենից առաջ հենց Ամերիկայի Միացյալ Նահանգների համար։

Մեր ժամանակներում իմպերիալիստների ավանտյուրաները չեն կարող անպատիժ մնալ։ (Երկարատև ծափահարություններ)։

Աշխարհի ժողովուրդների ուշադրությունը բևեռված է նաև Լաոսի իրադարձությունների վրա։ Լաոսը մի փոքրիկ պետություն է Հարավ-Արևելյան Ասիայում։ Դեռ 1954 թվականին Ժնևի վերաբերյալ Ժնևի խորհրդակցությունը որոշեց այդ երկրի ստատուտը՝ որպես անկախ և չեզոք պետության։ Սակայն ոմանց այդ ստատուտը դուր չեկավ։ Օրինական կառավարության դեմ կազմակերպվեց խռովություն, որի նպատակն է Լաոսը ներքաշել ՍԵԱՏՕ ռազմական բլոկի մեջ։ Բայց Լաոսի ժողովուրդը չի ուզում մասնակցել ոչ մի ռազմական բլոկի։ Ծավալվեց պայքար, որը մեծ հրդեհի վերածվելու վտանգ էր սպառնում։

Այժմ միջոցներ են ձեռք առնվում պատերազմական հրդեհի կայծերը մարելու համար։ Պատերազմող կողմերը արդեն հայտարարել են, որ դադարեցնում են կրակը, և մի քանի օրից հետո Ժնևում պետք է սկսվեն բանակցություններ Լաոսում խաղաղ կարգավորման վերաբերյալ։

Խաղաղության պահպանման բոլոր անկեղծ կողմնակիցները կարող են միայն ողջունել Լաոսին նվիրված խորհրդակցության հրավիրումը, բայց դա լոկ սկիզբն է։ Բոլոր շահագրգռված կողմերը պետք է օգնեն Լաոսի ժողովրդին խաղաղություն ձեռք բերելու, իսկական անկախ ու չեզոք Լաոս ստեղծելու հիման վրա, որն ազատ լինի դրսից նրա ներքին գործերին որևէ միջամտություն ցույց տալուց։ Լաոսի ժողովուրդը, ինչպես և ամեն մի այլ ժողովուրդ, իրավունք ունի ապրելու այնպես, ինչպես ուզում է, իր պետությունը կառուցի այնպես, ինչպես դա համապատասխանում է իր սեփական շահերին։

Մենք հարգանքով ենք վերաբերվում Լաոսի պրեմիեր-մինիստր, արքայազն Սուվաննա Ֆումայի այն հայտարարությանը, որ նրա կառավարությունը վարում է և այսուհետև ևս կվարի չեզոքության քաղաքականություն։ Դա ամենալավ դիրքն է Լաոսի համար, որի ժողովուրդը ձգտում է իր ջանքերը նվիրել ոչ թե սպառազինությունների մրցավազքին մասնակցելուն, այլ խաղաղ ստեղծարար աշխատանքին։

Մենք ցանկանում ենք, որ Ժնևի առաջիկա խորհրդակցությունը հաջող լինի։ Դրա համար այնքան էլ շատ բան պետք չէ։ Արևմտյան պետությունները պետք է հրաժարվեն Լաոսը իրենց ռազմական պլացդարմը դարձնելու փորձե-

րիոդ և չմիջամտեն նրա ներքին գործերին։ Ինչ վերաբերում է Սովետական Միությանը, ապա մենք մեկ անգամ ևս հայտարարում ենք, որ ուզում ենք լաոսը տեսնել անկախ ու չեզոք պետություն, և ոչ թե ագրեսիվ ռազմական բլոկների մասնակից։

Մենք ռազմական բլոկների մեջ մտնող պետություններին բազմիցս արդեն կոչ ենք արել, որ նրանք դիտակցեն ռազմական բլոկներին մասնակցելու և սպառազինությունների մրցավազքի բաղարականության կործանարար լինելը, քանի որ այդպիսի բաղարականությունը չի տանում դեպի լավը։ Սովետական Միությունը կողմնակից է, որ վերացվեն բոլոր ռազմական խմբավորումները, որպեսզի պետությունների միջև ծագող վիճելի հարցերը լուծվեն խաղաղ ճանապարհով, նրանց բանակցությունների միջոցով, ինչպես նաև Միավորված Ազգերի Կազմակերպության միջոցով։

Իհարկե, Միավորված Ազգերի Կազմակերպությունը իր այժմյան տեսքով պահանջում է բուժում լավ դեղորայքի օգնությամբ։ Այդ կազմակերպությունը պետք է բուժել, որպեսզի նա իրոք համապատասխանի իր կոչմանը և ընդունակ լինի օբյեկտիվորեն, բոլոր պետությունների շահերը հաշվի առնելով, քննարկել ու լուծել հասունացած հարցերը, որպեսզի նա լինի ամբողջ աշխարհի խաղաղության ապահովման իսկական գործիք, և ոչ թե մի գործիք, որը կատարում է մի խումբ պետությունների կամքը՝ ի վնաս մյուսների։

Կուբայի Ռեսպուբլիկայի դեմ ագրեսիան և Լաոսում խռովությունը, որը իմպերիալիստները կազմակերպել էին Սուվաննա Ֆումայի օրինական կառավարության դեմ, վկայում են, որ աշխարհում իրադրությունը բավականաչափ լարված է։ Արևմուտքի իմպերիալիստական, միլիտարիստական շրջանները չեն հրաժարվել պատերազմի սանձազերծման բաղարականությունից. այդպիսի բաղարականությունը մոնոպոլիստներին թույլ է տալիս հարստանալ սպառազինությունների մրցավազքի միջոցով։

Ժողովուրդները պետք է այս ամենը տեսնեն, ցուցաբերեն զգոնություն, համախմբեն իրենց ուժերը, վճռականորեն պայքարեն իմպերիալիստների մեքենայությունների դեմ։ Նրանք պետք է հասնեն զինաթափման հարցի լուծման, հասնեն այն բանին, որ ստեղծվեն պայմաններ, որոնք համապատասխանեն հաշտ ու խաղաղ ապրելու նրանց ձգտումներին։

Սովետական կառավարությունը հաստատակամորեն ու հետևողականորեն վարում է լարվածությունը մեղմացնելու և խաղաղ գոյակցության սկզբունքների հիման վրա պետությունների հարաբերությունները բարելավելու բաղաքականություն։ Լենինյան այդ բաղաքականությունը իրեն լիովին արդարացրել է։ Մեզ համար առանձնապես հաճելի է նշել, որ Սովետական Միության, սոցիալիստական լագերի երկրների խաղաղասեր բաղաքականությունը վաստակել է ամբողջ աշխարհի աշխատավորների ընդհանուր ճանաչումն ու հարգանքը։ Այդ բաղաքականությունը ժողովուրդներին բերում է խաղաղություն և փրկություն նոր կործանարար պատերազմի սպառնալիքից, ամրապնդում է ժողովուրդների ազատությունն ու անկախությունը, վիժեցնում է խաղաղության և առաջադիմության թշնամիների մեքենայությունները։ Մենք հաստատակամորեն այսուհետև ևս կվարենք այդպիսի բաղաքականություն։ (Երկարատև ծափահարություններ)։

Ընկերնե՛ր։ Սովետական Միությունը, մեր Հայրենիքի բոլոր ժողովուրդները այժմ վիթխարի վերելք են ապրում։ Սովետական ժողովրդի ստեղծագործական աշխատանքը, ժողովուրդ, որին գլխավորում է Սովետական Միության

փառապանծ Կոմունիստական պարտիան, օրավուր բերում է նորանոր նվաճումներ, մեր երկիրը մղում է դեպի առաջ, դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը։ (Բուռն ծափահարություններ):

Մենք կարող ենք հպարտանալ նրանով, ինչ արել ենք։ Բայց մենք իրավունք չունենք հանգստանալու և նիրհելու դափնիների վրա։ Դա ներհատուկ չէ մեզ՝ աշխատանքի մարդկանց, նրանց, ովքեր կոմունիստական հասարակարգ են կառուցում։ Սովետական մարդիկ պատրաստվում են Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարը դիմավորել այնպես, ինչպես նրանք միշտ դիմավորում են իրենց մեծ տոները՝ այսինքն տալիս են միլիոնավոր տոննա լրացուցիչ պողպատ, ածուխ, նավթ, հաց, միս, նրանք պատրաստվում են համագումարը դիմավորել կոմունիստարար։ Կարելի է շտարակուսել, որ հայ ժողովուրդը իր արժանի լուման կմտցնի այդ համաժողովրդական գործի մեջ։ (Երկարատև ծափահարություններ):

(Այնուհետև ընկ. Ն. Ս. Խրուշչովը հրապարակում է ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի ողջույնի տեքստը, որը բազմիցս ընդհատվում էր բուռն ծափահարություններով)։

Կեցցե՞ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 40-րդ տարեդարձը։ (Բուռն ծափահարություններ):

Կեցցե՞ Հայաստանի Կոմունիստական պարտիան՝ ՍՄԿՊ մարտական ջոկատը։ (Բուռն ծափահարություններ):

Կեցցե՞ մեր մեծ Հայրենիքը՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը։ (Բուռն ծափահարություններ):

Թող ամրապնդվի՞ ու բարգավաճի ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական անխախտ բարեկամությունը։ (Բուռն ծափահարություններ):

Փա՞ռք Սովետական Միության Կոմունիստական պարտիային։ (Բուռն, երկարատև ծափահարություններ, բոլորը ոտքի են կանգնում, բացականչություններ ի պատիվ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության):